Արձանագրություն 5

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/34» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.09.2019թ. ժամը 10:00-ին:
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Արթուր Ղարախանյան - ՆԾԻ բաժնի ծրագրի ղեկավար (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝
Վարդան Հայրապետյան - ՎԳԿ բաժնի ծրագրերի շինարարության գծով մասնագետ (ԳՊ/ԳԱ)
Արթուր Պետրոսյան - ՆԾԻ բաժնի մասնագետ (ԳՊ/ԳԱ)
Վահան Գրիգորյան - ՆԾԻ բաժնի մասնագետ (ԳՊ/ԲԱ)
Ալինա Ղազարյան - Տեխնիկական բաժնի ՆԾԻ գծով ճարտարագետ (ԳՊ/ԲԱ)
Գնումները համակարգող՝
Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/34» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- «ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 05020542, էլ. հասցե՝ info@modul.am
- «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ՝ ՀՎՀՀ 00113126, էլ. հասցե՝ gnumnergeodezia@mail.ru
- «Ուայդ Գեյթ» ՍՊԸ՝ ՀՎՀՀ 01533979, էլ. հասցե՝ wide.gate@mail.ru

1.2 Համակարգում 13.09.2019թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերում ընկերության անվանումը նշված է «Ոայդ Գեյթ» ՍՊԸ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ armeps համակարգում ինչպես նաև ՀՀ պետական ռեգիստրի իրավաբանական անձի պետական գրանցման վկայականում նշված ՀՎՀՀ-ով գրանցված է «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ն հանձնաժողովը որոշեց անվանման շեղումը համարել վրիպակ և մասնակցի հայտը գնահատել բավարար:

3.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Համայնքային և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողակտորների չափագրում *"Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս*	
«Ուայդ Գեյթ» ՍՊԸ	4900000	4900000
«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ	5600000	6720000
«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ	7105500	8526600

Հայտերի վերաբերյալ ստացվել է 2 հարցում 03.09.2019թ. և 08.09.2019թ. տրամադրվել են պարզաբանումներ համապատասխանաբար 05.09.2019թ. և 09.09.2019թ.:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով գնային առաջարկի նվազեցման նպատակով բանակցությունների հրավիրել գնման ընթացակարգի մասնակիցներին, սույն թվականի սեպտեմբերի 19-ին ժամը 11:00-ին (20 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

1.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի սեպտեմբերի 19-ին ժամը 11:00-ին ՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Ղարախանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վարդան Հայրապետյան

Արթուր Պետրոսյան

Վահան Գրիգորյան

Ալինա Ղազարյան

Գնումները համակարգող ՝ Դավիթ Գասպարյան